# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքարի Ալվարդ Վարդանյանի անվան հ.2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Հանրահաշիվ» առարկայի 18, «Երկրաչափություն» առարկայի 10, «Մաթեմատիկա» առարկայի 5 (ընդհանուր 33 դասաժամ),«Ֆիզկուլտուրա» առարկայի 8 դասաժամ, «Հայաստանի պատմություն» առարկայի 12, «Համաշխարհային պատմություն» առարկայի 7(ընդհանուր 19 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլը անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, ինչից հետո բնօրինակները վերադարձնում է մասնակցին:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի օգոստոսի 18-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի հոկտեմբերի 5-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքարի Ալվարդ Վարդանյանի անվան հ.2 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Զոլաքար 2-րդ փողոց 33-րդ շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 091 822 992 հեռախոսահամարով: